ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-12-Ը ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ՍԱԼՈՆԻԿ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Լիլիթ Սարոյան, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության արտաքին կապերի վարչության պետ

Նունուֆար Ստեփանյան, ՀՀ ՏԿԵՆ արտաքին կապերի վարչության միջազգային համագործակցության բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները

Հունաստանի Հանրապետություն (Սալոնիկ), 2025թ. ապրիլի 8-12

3. Հրավիրող կողմը

Սևծովյան ավազանի Interreg NEXT ծրագրի մշտադիտարկման կոմիտե

4. Գործուղման նպատակը

Մասնակցություն Սևծովյան ավազանի Interreg NEXT ծրագրի մշտադիտարկման կոմիտեի 3-րդ նիստին:

5. Քննարկված թեմաները

Մշտադիտարկման կոմիտեի ղեկավարի և ծրագրի համակարգողի կողմից ներկայացվել է Որակի գնահատման հաշվետվությունը, որի շրջանակներում ներկայացվել են նախնական ընտրված հայտերի, պահուստային ցանկում գտնվող հայտերի ցանկերը, ինչպես նաև մերժված հայտերի հիմնական պատճառները:

Որպես հաջողված օրինակ Թրասեի ժողովրդավարական համալսարանի ներկայացուցչի կողմից ներկայացվել է EfxINNOs ծրագրի արդյունքները, որը ֆինանսավորվում է Սևծովյան ավազանի Interreg NEXT ծրագրի շրջանակներում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Մշտադիտարկման կոմիտեի նիստի շրջանակներում քննարկումներ ենք ունեցել Interreg NEXT ծրագրի անդամ երկրների (Բուլղարիա, Վրաստան, Հունաստան, Մոլդովա, Ռումինիա, Թուրքիա, Ուկրաինա) ազգային համակարգողների հետ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Ընդհանուր հաստատվել է 52 նոր ծրագիր (28՝ սովորական/regular projects և 24 փոքրամասշտաբ ծրագրեր/small-scale projects)՝ 46.6 մլն եվրո ընդհանուր բյուջեով, որում ընդգրկված են 224 գործընկերներ ինչպես պետական, այնպես էլ ակադեմիական շրջանակներից, հասարակական կազմակերպություններից և այլն: Հայաստանից 2-րդ շրջափուլի համար ներկայացված է եղել 27 ծրագրայի հայտ, որից ընտրվել է 3-ը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Ակնկալվում է, որ ընտրված ծրագրերի հաջող իրականացման պարագայում հաջորդ ծրագրային հայտերի հաստատման ժամանակ ՀՀ-ից ներկայացված և հաստատված հայտերի քանակը կլինի ավելին:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Լիլիթ Սարոյան

Նունուֆար Ստեփանյան 16.04.2025թ.